




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք. Աշտարակ
Էջմիածնի խճուղի 65
հեռ. 3-29-39

N ԴՊ-26 Ե-¹⁶⁵⁵-----/14

«²¹» ⁰²----- 2014 թ



Ա.ԲԱԴ/0614/02/13 քաղ. գործով
 Արագածոտնի մարզպետարան
 Հասցեն՝ ք. Աշտարակ

Ձեզ է ուղարկվում Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «20.02.

2014թ. Ա.ԲԱԴ/0614/02/13 գործով վճիռը:

Իհից վճիռը «4» թերթից

Դատավոր

Գ. Խաչատրյան



գործ- ԱՐԱԴ /0614/02/13

Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

20 փետրվարի 2014թ.

ք. Աշտարակ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

/ այսուհետ նաև Դատարան/

Նախագահությանը դատավոր
Նիստի քարտուղար

Գ. Խաչատրյանի
Հ. Մատաթյան

Գործին մասնակցող անձինք

Հայցվոր

Անահիտ Մեհրաբյան

/անձ AN 0222387/

Պատասխանող

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Ներկայացուցիչ

Գ. Ներսեյան

ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան համայնք

/ՀՎՀՀ 05002589/

Ներկայացուցիչ

Ա. Ասլանյան

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Անահիտ Մեհրաբյանի /այսուհետ` Հայցվոր/ ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի /այսուհետ` Պատասխանող/` հողակտորը գնահատելու, օտարացման պատճառները ներկայացնելու, որնեց սեփականությունը վերադարձնելու կամ մեկ ուրիշով փոխանակելուն պարտավորեցնելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

II

Դատավարական նախապատմությունը.

Հայցվորը 22.08.2013 թ. Դիմելով դատարան խնդրել է պարտավորեցնել ՀՀ Արագածոտնի մարզպետարանին հողակտորը գնահատելու, օտարացման պատճառները ներկայացնելու, որնեց սեփականությունը վերադարձնելու կամ մեկ ուրիշով փոխանակելու:

Դատարանի 22.08.2013 թ որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վերադարձնելու:

Դատարանի 22.10.2013 թ որոշմամբ գործին ներգրավվել է որպես համանախապատմող ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքը:

Գործի քննությունն ավարտվել է 06.02.2014 թ -ին:




Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Հայցվորը հայտնել է, որ հողակտորը, որը գտնվում է Արտաշավան գյուղում, օտարացվել է իրենցից և տրվել է գյուղի համայնքին : Դա արվել է գաղտնի և իրենց թույլ չեն տվել մտնել տարածք: Երբ փնտրվել է խորհրդային իշխանությունը և Հայաստանը հայտարարել է սեփականությունը, իրենց հողակտորն օտարացվել է 1993թ.: Մայրը հողակտորը ստացել է «Երկիր» գործարանից 1990-ական թվականներին, այն չափատել են , մշակել, իսկ հետո վաճառել , որ այն օտարացվել է որպես գերեզմանատուն: Տարիներ շարունակ չեն կարողացել օրագործել հողակտորը, որը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղում: 2005 թվականից բողոքարկում է այս հարցը դատարաններում և տարբեր պետական տարիներին բայց ոչ մի նորմալ պատասխան չի տրվում , միաբովանդակ և անիմաստ պատասխաններ է ստանում և իշխանությունները ձեռք են առնում իրեն : Ոչ մի օրենք չի կոնկրետացվում իրեն ոչ կառավարության , ոչ ազգային ժողովի կողմից և հարցերը այսպես չափված են , որ ոչ կարողանան օգտագործել հողամասը, ոչ հաստատել նրա սեփականությունը: Ոչ մի կառավարական մարմին ուշադրություն չի դարձնում նշված հարցերին և հարցերը ձգձգվում են : Ինքը հիմնվում է Եվրոկոնվենցիայի 10 հոդվածին , նաև իր արձանագրության 1-ին հոդվածին: 10 –րդ հոդվածը հայտարարում է սեփականությունը անկախ իրավունքի մասին, որից զրկված են տարիներ շարունակ: Եվ դատարաններում, և իրավաբաններին դիմել է տարիներ շարունակ, որ ներկայացնեն հրամանները, որոնքները, որոշումները, հողակտորի օտարացման կամ սեփականության վերաբերյալ, բայց ոչ մի սեփականություն չի ստացել : Նաև 1 –ին արձանագրության 1-ին հոդվածի զրկվել են իրենց սեփականությունից, որը վերցրել և օտարացրել են : Արդեն 18-20 տարի է չեն կարողանում օրագործել իրենց սեփականությունը, քանի որ այն տրվել է գյուղի համայնքին: Գյուղապետը չի տրվում և կոչվում է , ասում է . «մինչև կառավարությունից չբերես հրաման կամ որոշում ձեռնարկության մասին , չմտնես գյուղ»: Մարզպետարանը ոչ մի հարցերով չի զբաղվում և իրականում պատասխաններ է տալիս , որոնք ոչ մի իմաստ չեն կրում իրենց մեջ: Իրենք կրում են օտարբերություն և արհամարհանք իրենց սեփականության նկատմամբ: Նաև ՀՀ արհամանադրությունը նշում է , որ յուրաքանչյուր անձի սեփականությունը և ունեցվածքը պետք է պաշտպանվի: Բազմաթիվ անգամներ և տարիներ շարունակ դիմում է ՀՀ Արագածոտնի մարզպետարանին և պահանջում է գնահատել հողակտորը, ներկայացնել որոշումները օրագրման կամ սեփականության մասին, բայց ոչ մի արդյունք չկա, հարցերը չեն լուծվում, չեն քննարկվում, ուղակի ձեռք են առնում: Պահանջում է , որ դատարանը պարտադրի մարզպետարանին գնահատել հողակտորը, ներկայացնել օտարացման պատճառները, արդարադրանք իրենց սեփականությունը կամ փոխանակել մեկ ուրիշով:

Հայցվորը գործի քննությամբ հստակեցնելով պահանջը նշել է, որ « հաստատել մեր սեփականության իրավունքը » պահանջն ըստ էության նշանակում է հաստատել Գոհար Գալստյանի այսինքն իր մոր սեփականության իրավունքը , քանի որ հողակտորը օտարացվել է , ինքը չի կարողանում ձեռնարկել ժառանգությունը, քանի որ մոր սեփականությունը համոզմամբ չէ : Պնդում է իր պահանջը մարզպետարանի նկատմամբ , քանի որ մարզպետարանը պետական մարմին է , իր պահանջը հողամասի օտարացումը անվանացրած պետական մարմնի դեմ է , ոչ թե համայնքի :

Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանում ՀՀ Արագածոտնի մարզպետն առարկել է ներկայացված պահանջի դեմ, հայտնել , որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանը սույն քաղաքացիական գործով չի



կարող որպես պատասխանող հանդես գալ, քանի որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հանդիսանալով պետական կառավարչական մարմին, որևէ իրավասություն և լիազորություն չունի հողակտոր գնահատելու, վերադարձնելու կամ փոխանակելու մեկ ուրիշով: Այնուհանդերձ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1876-Ն որոշմամբ Արտաշավան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները հանձնվել են համայնքին՝ որպես համայնքային սեփականություն, այդ թվում նաև այգեգործական ընկերություններին պատկանող շուրջ 105 հա հողատարածքները: Հայաստանի Հանրապետությունում այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները կանոնակարգվում և պատկերվում Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի սեպտեմբերի 3-ին ընդունել է թիվ 1129-Ն որոշումը, ըստ որի՝ 1) հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված և ներկայումս ըստ հողային հաշվեկշռի բնակավայրերի նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների գրանցման համար հիմք է հանդիսանում մինչև 1994 թվականի հունվարի 1-ը տրամադրված այգեգործի գրքույկը: 2) հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված, ներկայումս համայնքին սեփականության իրավունքով փոխանցված, ինչպես նաև համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող տարբեր նպատակային նշանակության հողամասերի նկատմամբ դատական կարգով քաղաքացիների սեփականությունը ճանաչվելու դեպքում սույն որոշման ուժով տվյալ հողամասի նպատակային նշանակությունը փոխվում է բնակավայրերի հողերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի), որի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով տրամադրվում է հողամասի գլխավոր հատակագիծ: Հայցվորի հայցադիմումի նույնաբովանդակ գրություններին ՀՀ Արագածոտնի մարզպետարանը բազմիցս պատասխանել է, որ այդ հարցը կարգավորվում է դատական կարգով և այդ հարցի լուծումը դուրս է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի լիազորությունների և իրավասությունների սահմաններից:

Պատասխանողի ներկայացուցիչը գործի քննությամբ պնդեց գրավոր առարկությունների փաստարկները:

Գործին ներգրավված ՀՀ Արագածոտնի մարզի *Արտաշավան համայնքի* ներկայացուցիչը գործի նախապատրաստական քննությամբ հայտնել էր, որ եթե Հայցվորն ունի այգեգործի վկայական, կիրառելի է ՀՀ կառավարության 2010 թվականին ընդունված որոշումը, սակայն առկա են օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր սեփականության իրավունքի ճանաչման մասին Հայցվորի պահանջները մերժելու մասին: Դատարան դատական ակտեր չեն ներկայացվել, գործի դատաքննությանը համայնքի ներկայացուցիչ չի մասնակցել:

Գործը քննվել է համայնքի ներկայացուցչի բացակայությամբ ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետարանի կողմից հողավաճի կանոններով:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.



ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1876-Ն որոշմամբ հրատաշավալի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը հանձնվել են համայնքին՝ որպես համայնքի սեփականություն :

Ըստ պատասխանողների փաստարկների՝ այգեգործական ընկերություններին, այդ թվում «Գիրովեց-3» այգեգործական ընկերությանը տրամադրված շուրջ 105 հա հողատարածքներ հանձնվել են համայնքին՝ որպես համայնքային սեփականություն :

Համաձայն 19.07.2012 թ Մ-2621 ՀՀ Ազգային արխիվ ՊՈԱԿ-ի արխիվային տեղեկանքի՝ Հայցվորի մայր, 1996թ մահացած Գոհար Մերոբի Աղաջանյանը Աշտարակի շրջխորհրդի որոշումի 1989թ մարտի 2-ի նիստի թիվ 4 արձևագրության համաձայն հանդիսացել է «Գիրովեց 3» այգեգործական ընկերության անդամ, նրան հատկացվել է Աշտարակի շրջանի հրատաշավալի այգետարածքի թիվ 21 տեղամասից հողակտոր՝ 600 քմ :

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 18.07.2012 թ հր 04/19 /2295-12 գրությամբ ի պատասխան Հայցվորի ՀՀ նախագահին ուղղված թիվ 20-8907 դիմումի հայտնել են, որ ՀՀ կառավարության անասնապատասխան որոշմամբ հողամասը հանձնվել է համայնքին որպես համայնքի սեփականություն, սակայն հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հարկ է կարգավորվել ՀՀ կառավարության 3.09.2010թ թիվ 1129-Ն որոշման 1-ին, 2-րդ կետերով նախատեսված դատական կարգով : Գրությունը համապատասխան փոստային տարբերակով հանձնվել է Հայցվորին, կցված է Հայցադիմումին :

Հայցվորը դատարան չի ներկայացրել հողամասի իրադրային հատակագիծը կամ բաժանման ակտնա, այնպե՛ս է մարզպետարանի դեմ ուղղված իր պահանջը :

Դատարանի իրավական վերլուծությունը.


Լսելով կողմերին, հետազոտելով գրավոր փաստաթղթերն ու մյուս ապացույցները, հանցից յուրաքանչյուրը գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է, հրատաշավալի է մեծման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդված՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքները, ազատությունները, և օրինական շահերի պաշտպանության համար :

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ դատարանը գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա :

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47 հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված ապացույցությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց նպատակները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար անհրաժեշտություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը. որոշ տեղեկությունները հաստատվում են՝ գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց պահանջներով :

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, նույն օրենսգրքի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց



պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ 6-րդ մասը սահմանում է, որ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Համաձայն ՀՀ քաղ դատ օր 49 -րդ հոդվածի՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

Համաձայն ՀՀ քաղ դատ օր 51-րդ հոդվածի, գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով, իսկ այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի համար եական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Ըստ հայցի հիմքի ու առարկայի՝ կիրառելի իրավական ակտերը.

Համաձայն «Մարդու իրավունքներ և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10 հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Նույն Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 5 -րդ հոդվածի՝ Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ քաղ օր 11 հոդվածի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար, դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար եական նշակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից:

Հայցվորը պահանջում է, որ « դատարանը պարտադրի մարզպետարանին գնահատել հողակտորը, ներկայացնել օտարացման պատճառները, վերադարձնել իրենց սեփականությունը կամ փոխանակել մեկ ուրիշով »:

Գործի քննությամբ պարզվել է, որ այգեգործական ընկերություններին տրամադրված հողամասերը իրավունքների առաջին պետական գրանցման գործարանում բարելավվել ու որպես պետական հողային ֆոնդ ՀՀ հողային օրենսդրության համապատասխան ՀՀ



կատարության որոշմամբ հանձնվել է համայնքին որպես սեփականություն : ՀՀ-ում այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքները կատարվելու նպատակով ՀՀ կատարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1129-Ն որոշման համաձայն՝ 1) հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված և ներկայումս ըստ հողային հաշվեկշռի բնակավայրերի նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների գրանցման համար հիմք է հանդիսանում մինչև 1994 թվականի հունվարի 1-ը տրամադրված այգեգործի գրքույկը : 2) հողամասի բաժանման սխեմայի հիման վրա այգեգործության նպատակով հատկացված, ներկայումս համայնքին սեփականության իրավունքով փոխանցված, ինչպես նաև համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող տարբեր նպատակային նշանակության հողամասերի նկատմամբ դատական կարգով քաղաքացիների սեփականությունը ճանաչվելու վերաբերյալ սույն որոշման ուժով տվյալ հողամասի նպատակային նշանակությունը փոխվում է բնակավայրերի հողերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի), որի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով տրամադրվում է հողամասի գլխավոր հատակագիծ :


Փաստորեն Հայցվորը չի ապացուցում, որ չի ստացել տեղեկություն, որպիսի իրավունքը խախտված է եվրասիական կոնվենցիայի 10 -րդ հոդվածով, ավելին դատարան ներկայացված հայցվադիմումին կցել է ստացված պատասխանը :

Ինչ վերաբերում է սեփականության իրավունքի խախտմանը, ապա դատարանն օրհանագրում է, նախ այն, որ այգեգործական ընկերություններին տրամադրված հողամասերի նկատմամբ հնարավոր խախտումների վերացմանն է ուղղված գործադիր արմնի 2010 թվականին ընդունված հիշատակված որոշումը՝ այգեգործական հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների գործընթացը կարգավորելու նպատակով, ինչպես նաև Հայցվորը չի ներկայացրել իր մոլոր հատկացված հողամասի իրադրային հատակագիծ, ժառանգության զանգվածը որոշելու, իրեն ժառանգություն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ, ներկայացված պահանջով խնդրել է մարզպետարանին նախարարությունը գնահատելու հողակտորը, օտարացման պատճառները ներկայացնելու, իրախատուցում տրամադրելու կամ համարժեք այլ հողամաս հատկացնելու : Առտասխանողը, հիմնվելով ՀՀ Սահմանադրության դրույթին, ըստ որի պետական և մեղական ընթանակատարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են դատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են սահմանադրությամբ կամ օրենքներով, հայցն իրավացիորեն չի ընդունել :

Քանի որ դատարանը գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնացել փաստի առկայությունը, ապա դրա ազդասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը :

Հայցվորը ՀՀ քաղ դատ օր 73-րդ հոդվածի 1-ին կետի՝ սույն գործով դատական իրավունքների մտայնացող անձանց պետք է բաշխվեն բավարարված պահանջների չափին համարժեքներ :

Ներքինի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղ դատ օր 3, 68, 73, 130-132, 140, 140՝ հոդվածներով դատարանը



Հայցվոր Անահիտ Մեհրաբյանի ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հողակտորը գնահատելուն, օտարացման պատճառները ներկայացնելուն, իրենց սեփականությունը վերադարձնելուն կամ մեկ ուրիշով փոխանակելուն պարտավորեցնելու մասին պահանջը մերժել:

Պատական ծախսերը բաշխել Հայցվոր կողմի վրա, Հայցվորից ՀՀ պետ բյուջե գանձել 4000 ՀՀ դրամ որպես չվճարված պետական տուրք:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապահ կարգով:

Վճիռը հրապարակումից մեկ ամսվա ընթացքում կատարվել է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԳԱՏԱՎՈՐ



Գ ԵՐԱՇՆՐՅԱՆ